

Հ. Անտոն Իւզգարտաշեան
Վարդապետ Մխիթարեան
եւ Ժողովրդապետ»:

(Ձեռ. Թ. 454, Թղ. 42ա):

Հ. Պ. Շիւքիւրեան ծնած է Կուտինա 1728ին: Մկրտութեան անունը Սահակ եղած է: Փնտռուած ուսուցիչի համբաւ հանած: Ամուսնացած: Անոր որդիքն է Հ. Անդրէաս Շիւքիւրեան: Կնոջ եւ մօր մահէ վերջ հայր ու որդի ի միասին Տրիեստի մէջ Մխիթարեաններու մօտ նորընծայ կ'ըլլան, բայց հարկ է ըսել որ հայրը Կուտինայի մէջ արդէն Փոքր աստիճանները, Կիսասարկաւազութիւն եւ սարկաւազութիւն ընդունած էր եւ 1787ին ուխտ կը դնէ ու երկու օր յետոյ քահանայ կը ձեռնադրուի:

«Պատմութիւն Կուտինայ քաղաքին» մէջ անոր մասին բաւական կարեւոր տեղեկութիւններ կան (համար. Հ. Յ. Տաշեան, Յուլի, էջ 991):

Կան տեղեկութիւններ նաեւ անոր արտադրած մէկ Մաշթոցի մէջ (Թ. 727 Մխիթ. Մատենադարանի ի վիեհնա): Կը գրուի՝ «Փառք, պատիւ, դոհուութիւն եւ պաշտօն հանդերձ երկրպագութեամբ ամենատիրք Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որ բարեխօսութեամբ եւ մաղթանօք նահատակելոց ի Թրիեստ քաղաքին, ետ կարողութիւն եւ յաջողութիւն ինձ ամենանուաստիս հասուցանել ի կատարումն զՄաշտոցս զայս ի վայելումն քահանայից եւ վարդապետաց նորոյս Սիօնի: Ես մահտեսի տիրացու Իսահակ Կուտինայի ընդ այլոց գործակցաց իմոց էի վարժապետ ի քաղաքին Կուտինայ, յորում ժամանակի թիւ Փրկչին էր 1778: Էջմիածնայ կաթողիկոսն էր Սիօն վարդապետ եւ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքն էր Չաքարեայ հալածիչ վարդապետն: Այս Չաքարեայ վարդապետն՝ մեծ հալածանք եհան ի վերայ ամենայն մերդնայ Ուղղափառաց յիշխանութեան Տաճկաց եղելոց: Նախ եւ առաջին սկսաւ ի Կուտինայ քաղաքէն՝ ի նմին ժամանակ մեք անդ վարժապետ էաք, զի էր զպրատուն ի սուրբ Սարգիս եկեղեցւոյ՝ զմանկունս քաղաքին այնորիկ կրթեալ ուսուցանէաք, եւ թիւ աշակերտաց մերոց էր աւելի քան զերկերկուր քսան եւ մեք յահէն նորա մեկնեալ անտի եւ եկեալ ի Կոստանդնուպօլսոյ ամրացայք ի Ղարաթայն ի թաղն, որ կոչուի Պէյ օղլի,

երեք հոգի էաք (այսինքն Տէր Աստուածատուր հեղահոգի քահանայն, որ վախճանեցաւ անդ յետ ութ ամաց եւ թաղեցաւ ի գերեզմանատունն Պէյ օղլին, զորոյ զհոգին Տէր Աստուած լուսաւորեցէ: Ես իմաստաւորիկ մահտեսի Իսահակս եւ գիտնական տիրացու Յարութիւն, որ յետ ութ ամաց զնայ ի Գաղատիա, զի էր քաջ դասատու, այս հալածանք տեւեաց մինչեւ յամս վեց. ի ներ յայսմ միջոցի բազում եւ զանազան վիշտս եւ զնեղութիւնս կրեցաք, եթէ կամիք զլիակատարն՝ գտեալ զպատմութիւն Կուտինայի ի վանքն Հարց Մխիթարեանց դրքատան ի Թրէստ քաղաքին, ի նմին ընթերցչիք): Եւ զկնի ինն ամաց առեալ զորդեակն իմ գտիրացու Յարութիւն եւ գիեսայն իմ գտիրացու Յակոբն եկաք ի Թրէստ քաղաքն՝ ի վանքն Մխիթարեան հարց Մխիթարեանց, եւ անդ գրեցի զՄաշտոցս զայս: Յամի Փրկչին 1786, որոյ աւարտումն եղեւ ի Հոկտեմբերի Ա.ին, ով ոք հանդիպիք հոգեւոր մատենիս այսմիկ միով Հայր մերիւ եւ Ողջոյն քեղիւ յիշեալիք զայս տառապեալ զմահտեսի Իսահակս, որ մահանումբ կոչուի Շիւքիւրեան, հանդերձ ընտանեօքն եւ դուք եւս յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յԱստուծոյ մերմէ, ամէն:

Եւ յետ այնորիկ 1787 Յունիսի 15ին յաւուրն Ուրբաթու ուխտեցի, 17ին նոյն ամսոյն Յունիսի քահանայ ձեռնադրեցայ, զանունս փոխեցին Հ. Պետրոս եղին, զի էր յերրորդում Կիրակի զկնի Հոգեգալղստեան օրն ձեռնադրութեանս: Սիրելիք, աղաչեցէ՛ք վասն իմ զՏէր, զի արացէ զիս մշակ արանց ամօթոյ, տացէ ինձ շնորհք գործունեայ, զի կարացից սրբութեամբ պաշտել զպաշտօն քահանայութեանս: Նաեւ ընդ իս որդեակն իմ տիրացու Յարութիւն որ անուանեցաւ Անդրէաս (փեսայն իմ տիրացու Յակոբն ուր անուանեցաւ Ըստեփան), զպլիք ձեռնադրեցաւ: Ապա 1787 ամի ի ութն Դեկտեմբերի Եղբայր Անդրէասն եւ Եղբայր Ստեփանն, ընդ նոսա Եղբայր Յովսէփն ի միասին ուխտեցին: Եւ յետ այնորիկ 1788 յամի ի Մարտի երկրորդումն աւուր Դատաւոր կիրակէին ի նոյն Բասենցի Յարութիւն վարդապետէն երեքն ի միասին կիսասարկաւազ ձեռնադրեցան: Ապա ի 11 Մայիսի յամին 1788 որդեակն իմ Հ. Անդրէաս եւ փեսայն իմ Հ. Ստեփաննոս, ընդ որս համաշխարհիկ

ընկերակիցն մեր Հայր Յովսէփն ի նոյն Բասենցի Գերապատիւ Յարութիւն Արքեպիսկոպոսէ էջմիածնի քահանայ ձեռնադրեցան: Տէր տացէ կարողութիւն՝ զի կարացեն սրբութեամբ պաշտել զպաշտօն քահանայութեան եւ լիցին մշակք արանց ամօթոյ առաջի Եեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն (էջ 312—314):

8. Մխիթարեաններու բուրաստանին մէջ — Տրիեստ — վաղաժամ կը թառամին զոյգ յուսալից պատանիներ¹³, որոնք կը պատրաստուէին քահանայական բարձր աստիճանին հասնելու:

Ա. «Յամի Տեառն 1804 ի 12 Նոյեմբերի 9 ժամու երեկոյի փոխեցաւ առ Տէր ցանկալի մահուամբ Եղբայր ՎԱՐԴԱՆ մեր ՈՒՆԵԱՆ՝ ուխտեալ նորընծայն եւ միաբանն Մխիթարեան վանաց սրբոց Մարտիրոսաց՝ ի հասակի 23 ամաց քօնիքօ հիւանդութեամբ, ընկալեալ յառաջագոյն զսուրբ Խորհուրդս եւ զօրհնութիւնս: Եւ ի վաղիւ անդր յերեկոյի թաղեցաւ ի գերեզմանատան սրբոյն Յուստոսի:

Աստուածատուր Վ. Բարիկեանց
Արքեպիսկոպոս էջմիածնի եւ Աբբայ եւն»:

(Ձեռ. Թ. 454, Թղ. 44ա):

Ուղունեան ծնած է վիեհնայի մէջ 1781ին. եւ որովհետեւ լատինածէս մկրտուած էր, Բարիկեան Արքեպիսկոպոսը անոր 1804 Սեպտեմբերի 7ին զրոշմի Խորհուրդը կը մատաւարարէ (Ձեռ. Թ. 454, Թղ. 21):

Բ. «Յամի Տեառն 1806ի 27 Յունիսի 7 ժամու զկնի միջօրէի, փոխեցաւ առ Տէր ցանկալի մահուամբ Եղբայր ԹՈՎՄԱՍՆ մեր ՏԱՒՈՒՏԵԱՆ՝ ուխտեալ նորընծայն եւ միաբան Մխիթարեան վանաց սրբոց Մարտիրոսաց ի հասակի 21 ամաց՝ քօնիքօ տի բէթթօ հիւանդութեամբ, ընկալեալ յառաջագոյն ի հոգեւորութիւնս: Եւ ի զսուրբ Խորհուրդս եւ զօրհնութիւնս: Եւ ի վաղիւ անդ յառաւօտու — 9 ժամու թաղեցաւ ի գերեզմատան սրբոյն Յուստոսի:

¹³ Եւ երկու ուրիշ կոանդուն հետամուտներ՝ Գալուստեան Միքայէլ եւ Աբգերեան Գէորգ, երկուքն ալ Կ. Պոլսեցի եւ միեւնոյն տարւոյն (1805) միեւնոյն հիւանդութեամբ կեանքէ տարաժամ զրաւած (համար. Ձեռ. Թ. 454, Թղ. 44ա—44բ):

Աստուածատուր Վ. Բարիկեանց
Արքեպիսկոպոս էջմիածնի եւ Աբբայ եւն»:

(Ձեռ. Թ. 454, Թղ. 44բ):

Եղբ. Թովմաս՝ Կ. Պոլսեցի է եւ աշխարհիս լոյսը տեսած՝ 1785ին:

9. 1806ին բօթը Ս. Ղազար կը հասնէր՝ «Ոչ եւս է Հ. ՍԱՀԱԿ Վ. ՊՐՈՒՆԵԱՆ»:
«Յամի Տեառն 1806ի 13 Ապրիլի է 5 ժամու զկնի միջօրէի փոխեցաւ առ Տէր Բերեացի Վ. Հ. ՍԱՀԱԿ Վարդապետն ՊՐՈՒՆԵԱՆ: Միանձն վանաց սրբոյն Ղազարու ՆԵԱՆ: Միանձն վանաց սրբոյն Զատիկի 56 ամօթիքա հիւանդութեամբ ի հասակի 56 ամաց: Եւ ի վաղիւ անդր ի 4 ժամու զկնի միջօրէի յուղարկաւորեցաք ի սուրբն Յուստոս եւ թաղեցաւ ի մասնաւոր գերեզմանի, որ առաջի մեծ զբան եկեղեցւոյն սրբոյն Յուստոսի:

Աստուածատուր Վրդ. Բարիկեան
Արքեպ. էջմիածնի եւ Աբբայ եւն»:

(Ձեռ. Թ. 454, Թղ. 44բ):

Մեծ Վեր. Հ. Եղիա Վ. Փէչիկեան (Վեհետիկ) ընդունած եմ հետեւեալ տեղեկութիւնները, զորոնք շնորհակալութեամբ հոս կը զետեղեմ. «Հ. Սահակ Պրունեան, կողմ չուած նաեւ Պրօխորոնեան, ծնած է Բերիա 1749ին, մկրտութեան անունը Յովսէփ, քահանայ ձեռնադրուած 1773ին եւ մեռած՝ 1806 հանայ ձեռնադրուած 1773ին եւ մեռած՝ 1806 հանայ 13ին: Եղած է յայտնի մաթեմատիկոս: Իր երկերն են՝ 1. Եռանկիւնաչափութիւն, տպ. 1810: 2. Աղիւսակը նշանակաց: Թիւն, տպ. 1794»:

10. Յուսալից հասակի մէջ յաւերժօրէն իր աչքերը կը փակէ Տրիեստ մէջ Հ. ՉԱՔԱՐԻԱ ՍԱՄԷԼԵԱՆՑ՝

«Յամի Տեառն 1809 ի 21 Յունիսի 7 ժամու յառաւօտուն փոխեցաւ առ Տէր ժամու մահուամբ Կ. Պոլսեցի Պ. Հ. Չաքարեայն մեր Սամէլեանց քօնիքօ տի բէթթօ հիւանդութեամբ ի հասակի իբր 25 ամաց, ընկալեալ յառաջագոյն ամենայն զպատուութեամբ զսուրբ Խորհուրդս եւ զօրհնութիւնս: Եւ ի նմին աւուր յերեկոյին եղաւ մարմինն եւ ի նմին աւուր յերեկոյին եղաւ մարմինն տիրոսաց: Եւ յերկրորդում աւուր առաւօտու ի յոթ ժամու մատուցաք պատարագ ձայնաւոր ի ներկայութեան մարմնոյն եւ պաշտօնէն ի պատարագին, ապա ի ժամ 10 զկնի

